186ա ... Սէվլար Հայրապետն։

186բ ... Բէրամէնց Պետրոսի որդի Պողոսն և Յովնանն, ետուն Սբ. Յակոբայ մէկ սուրմալու սկու մահրամայ։

... Սէլունց Աւում և իւր որդիքն — մէկ լաւ բասմայ կաշէ ծածկոց սեղանին։

187ա ... Նաւասարդէնց Յակոբն։

188ա ... Քաղբաթէնց Թաթէոսն և Դաւիթն — Ա. (1) խաչ, Ա. (1) Գանձարան ետուն, Ա. (1) Բուրսու բան կարպետ։

... Ղէվան — մին լաւ սկիհ ետուն Սբ. Յակոբայ։

189ա ... Նաւասարդէնց Զաքարիայն։

189բ ... Տէր-Աբրահամն և իւր որդիքն Եսայն և Աւումն ետուն Սբ. Յակոբայ մէկ լաւ սիւրմայ սկու մահրամայ, մէկ Աստուածածնի պատկեր։

190ա ... Յակոբէնց Ղազարն — Բ. (2) լաւ մոմտան։

190բ ... Ղարաման դուստր Մարեամն — ետուր մէկ Մաշտոց Սբ. Յակոբայ։

191ա ... Մինասն։

191բ ... Արղունէնց Յովսէփի որդիք Յակոբն, Մատուրն և իւրանց եղբայր հանգուցեալ Ղազարին — տվին յիշատակ նոր եկեղեցուն մէկ տարայի շաբիք, մէկ ջոխտ փեշկիր, մէկ Բուրսոյ բարց ծածկոց։

192ա ... Միրիբէկն։

192բ ... Պաղտու որդի Նիկողաոսն — ետուր նոր եկեղեցուն մէկ լաւ խորհրդանոցի վարագուր։ Եւ իւր եղբօրակին Նօխուտն — ետուր Սբ. Յակոբայ մէկ փոքր ծածկոց։

193ա ... Տէր-Աբրահամն և իւր եղբայր Մարութէն — Ա. (1) ոսկէտուփ Աւետարան, Ա. (1) Աղօթմատոյց՝ Տօնացոյցն այլ հետն։ Ա. (1) Յիսուս Որդի, Ա. (1) փոքրիկ Քարոզգիրք, Ա. (1) Տօնացոյց այլ ջոկ ետուն Սբ. Յակոբին վախմ, Ա. (1) Զայնքաղ էլ հետն։ Տէր-Աբրահամի կինն — Ա. (1) կարպետ, Ա. (1) լէպ[107], Ա. (1) բարձ, Ա. (1) դոշակ[108] ետ։

193բ ... Թիրէն և իւր որդի Անդրէասն — եբեր մէկ սուրմայքաշ սկու մահրամայ։

194ա ... Տէր Աբրահամի տղա Պողոսն։

194բ ... Ներքի Իսկանդարէնց Պետրոս և Պողոս — մէկ արձաթէ կանթեղ Գ. (3) ձակով։

... Իսկանդարի կին Մարգարիտն — Բ. (2) լաւ կարմիր փեշկիր։

195ա ... Իսկանդարն — Ա. (1) լաւ լական, Ա. (1) լաւ փպրուղ Ա. (1) լաւ խաչ, ՃԺԸ. (118) մսխալ, Ա. (1) Թարվիզոյ բանն եաղլուխ։

... Ասկանդարէնց Թանէսին և իւր որդի Պողոսին — երեսի Սբ. Յակոբին մէկ ոսկի իւր մաղզմանովն և մէկ սուրմայ էլ ոսկուն մահրամայ, շատ լաւն, թիվն ՌՃԺԳ (1664)։

195բ ... Խուշուշէնց Միքայէլն — ետուր Բ (2) կարպետ։ Եւ իւր դուստր Թանկսոյն — մէկ խալիչայ Սբ. Յակոբայ։ Եւ իւր որդի Մկրտիչն — ետուր մէկ ատենի Սաղմոսարան[109]։

---

107 արաբ. لحاف — վերմակ։

108 պրսկ. دوشك — ներքնակ։

109 ջնջված։